ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

54-19

« 20» մարտի 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 13-ի թիվ 5 և մարտի 19-ի թիվ 6 որոշումները:

Առդիր 2 թերթ:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, գ. Վահագնի
հեռ.՝ 0322-6-95-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19 » մարտի 2019 թվականի N 6

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՍԽԱԼԻ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՏԻՄ» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ. թիվ 2387-Ն որոշման 48-րդ կետով և հիմք ընդունելով Աշոտ Սաքանյանի դիմումը, հաշվի առնելով քարտեզագրման ժամանակ տեղի ունեցած սխալը և տրամադրված քաղվածքում տեղ գտած սխալը .

Որոշում եմ՝

1. Կատարել ուղղում՝ թիվ 1743847 գրանցման վկայականում գրված «Ժորա»-ի փոխարեն գրել «Ժորիկ»,
2. Դիմել անշարժ գույքի կադաստրի Վանաձորի տարածքային ստորոբաժանում վկայականի մեջ ուղղում կատարելու համար :

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ **N 5**
" 13 " մարտի 2019 թ.

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ հոդված 5-րդ կետով, "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, "Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին" ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 14.03.1997թվականի թիվ 51 որոշմամբ, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումամբ, ՀՀ կառավարության 08.04.2004 թվականի թիվ 456-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել ՀՀ կառավարության 08.04.2004 թվականի թիվ 456-Ն որոշմամբ անհատույց սեփականության իրավունքով Վահագնի համայնքին փոխանցված համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0118-0002 ծածկագրից առանձնացված 0.34094 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Ճանաչել Վահագնի համայնքի համայնքային սեփականության իրավունքը 06-103-0118-0002 ծածկագրից առանձնացված 0.34094 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության հողամասի և նույն հողամասում գտնվող, ՀՀ կառավարության 14.03.1997 թ. թիվ 51 որոշմամբ համայնքի փոխանցված (որպես կովանոց) 1458.84 քմ ներքին մակերեսով (արտաքին մակերեսով 1788.41 քմ) անասնաշենքի և 25.59 քմ պարիսպի նկատմամբ:

3. 06-103-0118-0002 ծածկագրից առանձնացված 0.34094 հա հողամասին և նույն հողամասում գտնվող անասնաշոնքին տրամադրել Վահագնի համայնք 6-րդ փողոց թիվ 47 փոստային հասցեն:

4.*Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշումից ծագող իրավունքների և պարտականությունների պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:*

Համայնքի ղեկավար Ս.Կոստանդյան